ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.02.2015թ.
238-ի 3

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի աշխատակազմի ղեկավար
պարոն Գարիկ Հովհաննիսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Սիլվա Բալայանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: 08.12.2011թ.-ին նա հայցադիմում է ներկայացրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին պատվի եւ արժանապատվության պատճառած վնասի փոխհատուցման պահանջի մասին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ընդունվել է արդյոք վարույթ ՀՀ քաղաքացի Սիլվա Բալայան կողմից 08.12.2011թ.-ին ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին ներկայացված հայցադիմումը պատվի եւ արժանապատվության պատճառած վնասի փոխհատուցման պահանջի մասին,
2. Եթե այո, ապա ի՞նչ ընթացք է այն ստացել,
3. Եթե ոչ, ապա ինչու՞:

Datalex.am կայքում առկա է ՀՀ քաղաքացի Սիլվա Բալայանի մասնակցությամբ մեկ դատական գործ՝ ըստ 14.12.2011թ.-ին դատարանի ստացած հայցի: Սույն հարցմամբ խնդրվում է տեղեկություն ոչ թե ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 14.12.2011թ.-ին ստացված, այլ 08.12.2011թ.-ին ստացված հայցադիմումի վերաբերյալ: Այն, որ հայցադիմումը ներկայացվել է 08.12.2011թ.-ին, հավաստվում է հայցադիմումի վրա ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կնիքի ամսաթվով (հայցի համապատասխան էջի պատճենը կցվում է):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան